ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 240-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 13-րդ մասի և ՀՀ վարչապետի 2011 թվականի դեկտեմբերի 21-ի N 1240-Ն որոշման պահանջներին համապատասխան ՀՀ կենտրոնական բանկը (այսուհետև՝ Բանկ) ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել Բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի N 240-Ա որոշմամբ հաստատված Բանկի 2013 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը՝ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ժբ2» կետի պահանջի համաձայն սույն եզրակացությունը տրվում է Բանկի կողմից ներկայացված՝ վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ:

Ա. Վարչական ծախսերի նախահաշվի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

1. Ըստ Բանկի 2013 թվականի վարչական ծախսերի նախահաշվի (այսուհետև՝ Նախահաշիվ), 2013 թվականին Բանկի վարչական ծախսերը կկազմեն 6,100.0 մլն դրամ, որը 2012 թվականի համար «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ 2012 թվական) հաստատված համապատասխան ցուցանիշից ավելի է 3.3 %-ով կամ 192.5 մլն դրամով: Ավելացման հիմնական մասը՝ 92.5 %-ը կամ 178.1 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի ապարատի պահպանման ծախսերին:

2. Ըստ Նախահաշվի, 2013 թվականին Բանկի ապարատի պահպանման ծախսերը նախատեսվել են 5,835.9 մլն դրամի չափով, որը 2012 թվականի համապատասխան ցուցանիշից ավելի է 3.1 %-ով կամ 178.1 մլն դրամով: Բանկի ապարատի պահպանման 2013 թվականի ծախսերի 90.0 %-ը (2012 թվականի՝ 89.9 %-ի դիմաց) կամ 5,251.0 մլն դրամը բաժին է ընկնում Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ պարգևատրումը և նյութական խրախուսումը) և սոցիալական ապահովության գծով ծախսերին, որը նույն ցուցանիշի գծով 2012 թվականի համար Բանկի կողմից նախատեսված 5,086.3 մլն դրամից ավելի է 3.2 %-ով կամ 164.7 մլն դրամով:

2.1. Բանկի աշխատակիցների աշխատավարձի (ներառյալ աշխատավարձին հավասարեցված միջոցների) գծով ծախսերը 2012 թվականի համար հաստատվել են 4,719.3 մլն դրամ (հաշվի առած նաև գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը), որի դիմաց, ըստ Բանկի կողմից ներկայացված Մեկնաբանության (այսուհետ՝ Մեկնաբանություն), 2013 թվականին նախատեսվել է 4,860.5 մլն դրամ (141.2 մլն դրամ կամ 3.0 % աճով): Մեկնաբանության համաձայն Բանկի աշխատակիցների աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվել է՝ ելնելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի Բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: Բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը 2013 թվականի համար ընդունվել է 500.0 հազ. դրամ, որը 2012 թվականի համար նախատեսված նույն ցուցանիշից ավելի է 48.5 հազ. դրամով կամ

10.7 %-ով (ըստ Մեկնաբանության, 2013 թվականի համար ՀՀ առևտրային բանկերի կողմից ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձի չափը կանխատեսվում է 617.0 հազ. դրամ): Աշխատավարձի գծով ծախսերի աճը պայմանավորված է Բանկում գործող վարձատրության կանոններով նախատեսված աշխատավարձի բնականոն աճով: Հարկ է նշել նաև, որ աշխատավարձի 2013 թվականի հաշվարկը կատարվել է 810 աշխատակցի հաշվով (2012 թվականի համար նախատեսված 800 աշխատակցի դիմաց): Հաստիքների ավելացումը կապված է Բանկում դրամանիշերի փորձագիտական գործառույթի ավելացման, ինչպես նաև «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրների բացմամբ Բանկում հետազոտական և կրթական ծրագրերը իստիտուցիոնալ հենքի վրա դնելու անհրաժեշտության հետ:

Աշխատավարձի գծով ծախսերի աճը պայմանավորված է նաև հարկային օրենսդրության փոփոխություններով, մասնավորապես. 2013թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» 30.12.2010թ. N ՀՕ-246-Ն ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, համաձայն որի 2013 թվականից եկամտային նոր հարկման մեխանիզմի կիրառումը պարտադրում է գործատուներին աշխատակիցների աշխատավարձը բարձրացնել այնքան, որպեսզի նշված օրենքի համաձայն եկամտային հարկով հարկումից հետո յուրաքանչյուր ամսվա համար վճարման ենթակա աշխատավարձը պակաս չլինի մինչև տվյալ օրենքն ուժի մեջ մտնելը աշխատավարձի հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձից:

Սոցիալական ապահովության այլ ծախսերի գծով Նախահաշվով նախատեսված է 390.5 մլն դրամ՝ Բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ ծախսերը հոգալու համար: Այն գերազանցում է 2012 թվականի համար նախատեսված գումարը շուրջ 23.5 մլն դրամով կամ 6.4%-ով, որը կապված է նոր աշխատատեղերի բացման, ինչպես նաև «Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրներ աշխատանքի ընդունվողների համար լրացուցիչ սոցիալական փաթեթի տրամադրման հետ:

2.2. Ռազմավարական խնդիրների իրականացման գործում կարևորելով անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը՝ 2013 թվականին Բանկը կշարունակի ապահովել իր աշխատակիցների մասնակցությունը ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում վերապատրաստման ծրագրերին, ուսուցողական և փորձի փոխանակման այցերին: 2013 թվականին գործուղման ծախսերը (ներառյալ անձնակազմի ուսուցման և վերապատրաստման

ծախսերը) նախատեսվում են 432.8 մլն դրամի չափով կամ 2012 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով:

2.3. Բանկի 2013 թվականի ներկայացուցչական ծախսերը ծրագրվել են 54.2 մլն դրամ կամ 2012 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով: Ըստ Մեկնաբանության, 2013 թվականին նախատեսվում է մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ, օտարերկրյա բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ներկայացուցիչների այցեր՝ համատեղ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ քննարկումների և բանակցությունների նպատակով:

2.4. Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման և սպասարկման 2013 թվականի ծախսերը նախատեսվել են 97.9 մլն դրամի չափով, որը 2012 թվականի մակարդակից ավելի է 13.5 մլն դրամով կամ 15.9 %-ով: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են շահագործվող 29 ավտոմեքենայի համար՝ հիմք ընդունելով 2012 թվականին Բանկի կողմից վառելիքի ձեռքբերման գների Բանկի կանխատեսումները, վառելիքի ձեռքբերման և ավտոմեքենաների տեխսպասարկման համար կնքված պայմանագրերը, ինչպես նաև Դիլիջանի «Ուսումնահետազոտական կենտրոնի» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրի ՏԴԿ տեղային գործուղումների քանակի ավելացման հանգամանքը:

3. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսերը 2013 թվականին կկազմեն 64.4 մլն դրամ, որը 0.7 %-ով կամ 0.5 մլն դրամով զիջում է 2012 թվականի համար նախատեսված համապատասխան ցուցանիշը:

4. Բանկի ծառայողների աշխատանքի համար նորմալ պայմաններ ապահովելու նպատակով տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված 2013 թվականի ծախսերը Բանկի կողմից նախատեսվում են 121.5 մլն դրամի չափով, որը 19.1 մլն դրամով կամ 18.6 %-ով ավելի է 2012 թվականի համար նախատեսված գումարից: Գումարի ավելացումը պայմանավորված է Դիլիջանի «Ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրների շահագործման համար տնտեսական ապրանքների և նյութերի սպառման ծավալների ավելացմամբ:

5. 2012 թվականի ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսերը նախատեսվում են 58.2 մլն դրամ, որը 2012 թվականի ծրագրային նույն ցուցանիշը զիջում է 4.2 մլն դրամով կամ 6.7 %-ով:

6. Չնախատեսված ծախսերի գծով Նախահաշվում նախատեսված է 20.0 մլն դրամ՝ 2012 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշի մակարդակով: Չնախատեսված ծախսերը կազմում են Բանկի 2013 թվականի համար ծրագրվող վարչական ծախսերի ընդհանուր ծավալի 0.3 %-ը:

Բ. Կապիտալ ներդրումների ծրագրի նախագծով նախատեսված ծախսերի վերաբերյալ

Բանկի կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը 2013 թվականի համար Բանկի կողմից առաջարկվում է սահմանել 20,335.1 մլն դրամի չափով, որը զիջում է 2012 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշին 14,845.8 մլն դրամով կամ 57.8 %-ով: Էական փոփոխության են ենթարկվել նաև կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալում առանձին տարրերի տեսակարար կշիռները:

Մասնավորապես, 2013 թվականի համար Բանկի կողմից նախատեսվում է ծրագրված կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակի.

ա) 60.6 %-ը կամ 12,344.0 մլն դրամն առանձնացնել Բանկի աշխատանքային շենքերի և շինությունների կառուցման, ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը զիջում է 2012 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշին 13,151.0 մլն դրամով կամ 48.4 %-ով (2012 թվականին այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 72.4 %-ը): Ըստ Մեկնաբանության, նշված գումարը պլանավորվում է ծախսել Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի էլեկտրասնուցման և արտաքին ինժեներական ցանցերի շինմոնտաժային մնացած աշխատանքների, ինչպես նաև նախկինում կատարված աշխատանքների երաշխիքի չվճարված մասի վճարման, տարածքի բարեկարգման, հարդարման, ենթակայանի կառուցման և էլեկտրասնուցման, արտաքին ինժեներական կապերի շինմոնտաժային աշխատանքների իրականացման, բնակելի շենքի հարդարման և բարեկարգման, ենթակայանի կառուցման և էլեկտրասնուցման, ներքին ինժեներական ցանցերի մի մասի և արտաքին ինժեներական ցանցերի կառուցման համար:

բ) 31.0 %-ը կամ 6,300.0 մլն դրամն ուղղել այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրմանը: Նշված գումարը 1,100.0 մլն դրամով կամ 14.9 %-ով զիջում է 2012 թվականի ծրագրային համապատասխան ցուցանիշը: Իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ներդրումները նախատեսվում են՝

- «Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ-ների մասով՝ 6,000.0 մլն դրամ,
- «Հայինկասացիա» ՓԲԸ-ի մասով՝ 300.0 մլն դրամ.

գ) 7.9 %-ը կամ 1,600.1 մլն դրամի չափով գումար հատկացնել համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների, Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ (այդ թվում՝ անվտանգության ապահովման համար) հիմնական միջոցների ձեռքբերման և կապիտալ վերանորոգման համար: Նշված գումարը 634.8 մլն դրամով կամ 28.4 %-ով զիջում է 2012 թվականի համար հաստատված համապատասխան ցուցանիշին (2012 թվականին ծախսային այս տարրը կազմում էր կապիտալ ներդրումների ծրագրային ցուցանիշի 6.3 %-ը): Նշված խումբ ծախսերի ծրագրված գումարով նախատեսվում է ձեռք բերել.

- 1,373.3 մլն դրամի համակարգչային տեխնիկա (կազմում է այս խումբ ծախսերի 85.8 %-ը): 2013 թվականի համար նախատեսված գումարը զիջում է 2012 թվականի ծրագրային մակարդակին 739.3 մլն դրամով կամ 35.0 %-ով,
- 160.8 մլն դրամի գրասենյակային գույք, կապի միջոցներ և Բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 10.1 %-ը), 2012 թվականի ծրագրային մակարդակից ավելի է 107.7 մլն դրամով կամ շուրջ 3 անգամ,
- 50.4 մլն դրամի անվտանգության ապահովման համար հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 3.1 %-ը), 2012 թվականի ծրագրային մակարդակից ավելի է 1.8 մլն դրամով կամ 3.8 %-ով,
- 15.6 մլն դրամի էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ (կազմում է այս խումբ ծախսերի 1.0 %-ը): 2013 թվականի համար նախատեսված գումարը 2012 թվականի ծրագրային մակարդակը պակաս է 5.0 մլն դրամով կամ 24.3 %-ով:

դ) 0.5 %-ը կամ 111.0 մլն դրամը հատկացնել վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրմանը (2012 թվականի ծրագրային մակարդակից ավելի է 40.0 մլն դրամով

կամ 56.3 %-ով)՝ Բանկի խորհրդի անդամների համար թվով 6 հատ ավտոմեքենա ձեռք բերելու համար (2004 թվականից շահագործվող ավտոմեքենաները նորացնելու նպատակով):

Ամփոփելով, հարկ է նշել, որ Բանկի 2013 թվականի վարչական ծախսերի նախահաշիվը և կապիտալ ներդրումների ծրագիրը Բանկի կողմից լրամշակվել է, հիմնականում հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությունները:

Նպատակահարմար ենք գտնում առաջարկել Բանկին վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների նախնական տարբերակի նկատմամբ արդեն իսկ կատարված փոփոխությունների ոգով քննարկել Բանկի 2013 թվականի ծախսերի հետագա օպտիմալացումը: